

**ԿԱՆՈՆԱՆՈՒԹՅԱՆ**

**ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ  
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**

2.

**ՎԱՐԴԱՊԵՏՈՒ ԾՐԱԿԱՆ  
ԻՐԱՆԱՍՏՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՄԻՆՉՆԻ ԵՐՐ ՅՈՒՑ**

Վարդապետութեան, անշուշտ Ծայրագոյն Վարդապետութեան նուիրուած այս ուսուցիչներու թիւերը ամփոփելու համար ինչ ինչ կարևոր կէտեր ալ պէտք է նկատի առնել: Այսպէս, շատ կարևոր է գիտնալ թէ Վարդապետին տրուած (14 աստիճաններով) իրաւասութեան գործադրութիւնը մինչև ե՞րբ տեղի է: Հայ Եկեղեցւոյ պատմութեան մէջ մասնաւորապէս մշակուած նիւթ մը չէ այս Եկեղեցին, որ իր ներքին կազմակերպութիւնը, այսինքն դաւանարանական, ծիսական, ժամակարգական, բնական, երաժշտական և այլն կազմակերպութիւնը գրեթէ վարդապետներուն կը պարտի, իր պատմութեան մէջ չի կայ թայթեր այնչափ կարևոր, չըսենք առատ առաջ, որպէսզի կարենայինք գոնէ ամենէն նշանաւոր վարդապետներուն կենսագրութիւնը կողմել և մանաւանդ երևան կաննել անոց իրենց իշխանութիւնը գործադրելու եղանակը: Իսոյց՝ բազմացուածին չափ կարևոր կամ առատ առաջնորդութիւնը պատճառ մը չէ, որ մենք գտնուածներէն ալ չօգտուինք՝ պատմական գետնի վրայ ցայտեցնելու համար Մեծ և Վարդապետի՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի աստիճանին տեական նշանակութիւնը, որ հայեցի նկարագիր մը առաւ Սիւնիաց Վարդապետարանով: Մինք տեսնենք որպէն Միսիակոս Գօշի և Գր. Տաթևացիի նման իրապէս վարդապետներ, իրենց տրուած վարդապետական իշխանութեան կատարեալ և ծայրագոյն գործադրութեան մէջ: Այնքան ազդեցութիւն և հեղինակութիւն ինչպէս Եկեղեցւոյ ներքին գործերուն մէջ, նոյնպէս վարչական խնդիրներուն մէջ, ա-

նոք գործադրեցին իրր վարդապետ, միացնելով անշուշտ իրենց անհատական արժանիքը, իրենց բարձր և կորովի նկարագիրը: Վարդապետական իրաւասութեան հետ, Հայ Եկեղեցւոյ մէջ վարդապետական իշխանութեան մշակուած գործունէութիւնը շնչտեղու համար կազմուած նշանաւոր վարդապետներու յաջորդական այլեայլ ցանկերը — որոնց վրայ պիտի անդրադառնանք — ցոյց կու տան, թէ հակառակ պատմական որոշ ծանօթութիւններու չգոյութեան այդ վարդապետներու կեանքին և գործին նկատմամբ, վարդապետութիւնը մինչև ԺԸ դար պահեց իր գործնական նշանակութիւնը: Հայ Եկեղեցւոյ մէջ: Մենք այս մասին շատ երախտապարտ ենք Դաւրիժեցի Առաքիլ Վարդապետին, որու Եկզ. պատմութեան մէջ ինչ ինչ թանկագին տեղեկութիւններ կը գտնենք վարդապետութեան մասին: Հետևի՛ք ուրեմն Դաւրիժեցիի տեղեկութիւններուն:

Դաւրիժ և Մելքիսեդեկ, աթոռակից կաթողիկոսներ, Էջմիածնի պարտքը վճարելու համար մեծարանց համակ մը կը գրեն «Առ մեծ Վարդապետ Սրապիոն», Տիրապէջի ի Առաջնորդին, որպէսզի գայ հոգայ այդ պարտքերը և կաթողիկոս ըլլայ: Ստոյգ է սր աթոռակից կաթողիկոսներ Սրապիոն Վարդապետին կը դիմեն ճիշդ անուր հարցաւրեան համար, ստոյգ է նաև որ Սրապիոն կաթողիկոս եղաւ (1603 Օգոստ. 14 - 1606 Ապրիլ 23) Գրիգոր (Լուսաւորի) անունով և անհնարին նեղութիւններ կրցի, — բայց Սրապիոն ամենէն առաջ շնորհքով վարդապետ մըն էր, և եթէ ընդունեցաւ առաջարկը, սոչ թէ յաղապար կաթողիկոսութեան և փառաց, քանզի նա փառաւորեալ էր յիստորիոյ և ի մարդկանէ, այլ վասն փրկութեան լուսասփիւռ Սթոսոյն»: Կեղեցի Դուկաս մեծ վարդապետին — սոր էր գլուխ ամենայն վարդապետաց ժամանակին» — աշակիրտեցաւ ան, մշակեց իմաստասիրական և աստուածաշնչական ուսումները և կատարեալ և վկայեալ արժանաւորութեամբ առաւ վարդապետական գաւազանը՝ նոյն ինքն Դուկաս Վարդապետէն 1586 Փետր. 20/ին Տիրապէջի մէջ: Արապիոն ազրիւրաբար կը քարոզէր, դպրոց բացաւ, պայծառացուց Եկեղեցին, սքանչել

բառ հանդիսի երկնայնոցն էր ժամակարգու-  
 թիւն նորա՝ գեղեցիկ և պատշաճ կարգա-  
 սարսիթամբ. երգօք և եղանակօք՝ զան-  
 ձիւք մեղհիկից՝ թագաւորօք և աշխուհիք.  
 Իր սովորական գործն էր սգաս և քարոզս:  
 Սրապիտնի Գարոցէն նշանաւոր վարդապետ-  
 ներ էլան. 1) Կեսարացի Գրիգոր Վրդ. (եռքը  
 Գաթարօք Կ. Պոլսի), աայր գիտնական  
 նրրից և արտաքնոցս, վիճարանող. 2) ՎՄԽ.  
 ծակոցիս Բարսեղ Վրդ., Սրապիտնի յա-  
 իրրը Տիարպէթրիի առաջնորդական Սթ-  
 րին վրայ. 3) Սուրբայցի Յովհաննէս Վրդ.,  
 Առաջնորդ Սուրբօրի, սոր առաւելարաշխու-  
 թեան և ամենայն համարողական արուեստի  
 էր քաջ հմուտս. 4) Տարօնեցի Արիստակէս  
 Վրդ., սոր էր կատարեալ գիտող երաժըշ-  
 տական երգոց և եղանակացս. ինչպէս նաև  
 5-6) Հոգևեցի Յովսէփ և Յովհաննէս, և 7)  
 Արհիշեցի Յովհաննէս Վարդապետներ, և  
 8) Տաթևացի Մովսէս Վրդ., որ եռքը շատ  
 նշանաւոր, շինող կաթողիկոս մը եղաւ  
 (Ա. Դաւրիժեցի, Գլ. Ա. Բ.):

Վարդապետներու գործունէութեան մա-  
 սին շատ կարևոր են Դաւրիժեցիի յայտնու-  
 թիւնները իր գործին Ի Ա. և Ի Բ. գլուխնե-  
 րուն մէջ, ոչ թէ միայն միանձնական կեն-  
 թի վանականութեան զերեւոտատարութեան  
 ստեղծուէն, որ իր զօրաւոր պատճառներն  
 ունէր, այլ տնոր համար որ վարդապետներ  
 են գործողներ, որոնք ժամակարգութիւն  
 կը վերահաստատեն բարեփոխելով, որոնք  
 նշխարակ վանական զգեստները կը գտնեն և  
 կը վերահաստատեն գիրքերու քննասիրու-  
 թեամբ և Ապոկրիֆներու հետեոզութեամբ  
 (սնդ, Երես 285), զիրջուպէս խաթարուած  
 կենդեցի մը կը վերականգնեն: Վարդապե-  
 տութիւնը այնքան կը բարձրանայ և իր նշա-  
 նակութիւնը այնքան կը ճշգրտի գործնական  
 կենսի մէջ, որ, զոր օրինակ, սթուական  
 եպիսկոպոսն Տաթևու, որ զկլիի եղև վար-  
 դապետ, կը թողու վանքու և Շամախ կ'եր-  
 թայ սուրբուի և առաջնորդի մողովորդանա:  
 Դաւրիժեցիի պատմութեան ԻԳ. գլուխը  
 զՊատմութիւն վարդապետութեան եւ վարուց  
 սրբոյ վարդապետին Պօղոսի, որ վախճա-  
 նեցու 1620ին վարդապետական մեծ մեծ  
 գործերով արդիւնաւորել է եռքը իր գաւա-  
 ղունը, արժէքաւոր գրուագ մըն է, ուր  
 երեան կու գայ վարդապետը իր իշխանու-

թեան և իրաւասութեան լրակատար գոր-  
 ծադրութեան մէջ: Պօղոս Վարդապետին  
 քաշածնիրը տգէտ արդանեբու և Մելքի-  
 սեղեկի նման փառասէր և նախանձու Կա-  
 թողիկոսի մը երեսէն, իրը նորահանուկ  
 քարոզիչ և կեղծաւոր իր վարքով, կա-  
 տարեալ նահատակութիւն մըն է:

Վարդապետութեան փառասիրումը կը  
 գտնենք Տաթևացի Մովսէսի գործունէու-  
 թեան մէջ: Դաւրիժեցին շատ խնամք տա-  
 րած է Մովսէս Վարդապետի գործունէու-  
 թիւնը մանրամասնելու համար: Սրապիտն  
 Վրդ. (= Գրիգոր կթղ.) կանուխէն դիտած  
 էր իր զպրոցին այս կրտսերագոյն աշակեր-  
 տին ուղիւթիւնը և ընտիր ընտիր յաւ-  
 կութիւնները, և իր մասնաւոր հոգածու-  
 թեան առարկայ ըրած զայն, սյնպէս որ  
 իր վախճանին մօտ — որ Տիարպէթրիի մէջ  
 տեղի ունեցաւ — յատկապէս յանձնարարեց  
 իր աւագ աշակերտ կեսարացի Գրիգոր  
 Վրդ.ին, որպէսզի մասնաւոր խնամք տանի  
 Մովսէսին վրայ, և ևս սուցեալ յարբունս  
 հասակի և վարդապետական ուսման տայ  
 սզգաւազան և զպատիւ վարդապետական:  
 Կեսարացի Գրիգոր Վարդապետ կը կատարէ  
 իր հոգևոր նոր կտակը և իր Կ. Պոլսի Գա-  
 տարիարքութեան միջոցին կու տայ վարդա-  
 պետական զաւազանը Մովսէսին: Մովսէս՝  
 վարդապետական սքանչելի ախպար մըն է,  
 թէ՛ իր վանական և թէ՛ իր ուսումնական:  
 Ան ժամանակակից ուրիշ վարդապետներու  
 պէս պատճառելու և փափկելու հանդերձն  
 չի յոխորտար. պարկեշտ է և սրբակրօն,  
 այնպէս որ բոլոր Պօլսեցիք, աշխարհական  
 և եկեղեցական, ինչպէս նաև Շամհի Ձէ-  
 լչպին և արեւելցի վանապետները կը վկա-  
 յեն Մովսէսի արժանաւորութեան, և Գրի-  
 գոր Վարդապետ, թէ և աայր ահարկու և  
 յոյժ խրախ և զժուարհաւանն, բայց ծա-  
 նօթ արդէն իր աշակերտակցին և աշակեր-  
 տին քաղցր և սրբասէր բարքին ու վարքին,  
 անձնական և ժողովրդական վկայութիւն-  
 ներու մէջ սեռ նմա զղաւազան վարդապե-  
 տական մեծաւ հանդիսիւ: Մովսէս Կ. Պոլ-  
 սէն ուղղակի Տիարպէթրի կ'երթայ՝ Սրա-  
 պիտնի շիրիմը համբուրելու, և կը սկսի իր  
 քարոզութեան. աւ կը քարոզէր Աւեսա-  
 րանը Դաւրիժեցիի խօսքերով, սվճախ և  
 պայծառաւ քարոզութեամբ: Մովսէս Վար-

դպրատնի քարոզութիւնը շատ հանդիպում էր կ'ընդունէին աշխարհականները. վանականները և արեղաներ միայն կը գտգտէին. այնպէս որ Տաթևու վանքին մէջ, իր բնավայրը՝ չկրցաւ կենալ, վանքեր մէյուէկ շահաստաններ եղած են. իւրաքանչիւր սենազուխ (գիւղարաւոր) իր անձնական ինչքն ունէր. այդիւ բուրաստան, փեթակ (մեզուի), տուն, մառան, համբարանոց, եկամուտ: Ասկէ զատ՝ վանականներ վանքին փկամուտներն ալ իրենց մէջ կը բաժնէին, կու տային իրենց ազգականներուն և սիրածներուն. վանքերը լեցուած էին տկանածքք և տանտիկնօք և իւրեանց ազգայնօք: Վանական սքեմը կորսուած էր: Դարիժեցին կը պատէն թէ (Գլուխ ԻԱ.) Յարենցի Սարգիսն ալ. և Տրապիզոնցի Տէր Կիրակոս (Իր կնոջ մահուանէն ետքը) ի'նչպէս կ'իրար զատն և հաստատեցին վանական կարգը, ժամակարգութիւնը և նոյնիսկ սքեմը. սկսել զորպիսութիւն և զգեստուցն զտին ի գրոցգրուսիքայն, որ է գլխոյ թօփին, և զհասկուսին, և զսեմն, և զգլխսն, որ է մազեղեմն ի ներքոյ զգեստուցն ի վերայ մերկ մարմնոյն, և հասարակ ամենեցուն զգեստն բովանդակ ասուելեմ լիցի և ոչ բաւելելեմ, և զասուելեմ տապիկին երկայն պնդուաւոր առնել մինչ ի յոթն, և զօթի մազեղեմն: Եւ սահմանեցին ամենեցուն թէ իւրաքանչիւր ոք իւրովք զգեստուցն չընցի. եթէ միայնակեաց իցէ՝ իուսիքային և բաւակուսովն. եթէ երէց իցէ՝ փիլոնաւն, եթէ արեղայ իցէ՝ փիլոնաւն և վեղարաւն: Այս կրօնաւորական զգեստ ամենին անհետ լեալ էր, և այժմ սոքա զտին. իսկ վեղար և փիլոն թէպէտ գուր, այլ, միայն ի ժամ առթիւցն զգեստին, և զհին արձակման ժամուն ի բաց եղեալ յինքեանց, իբրև զաշխարհականս չընէին» (Ա. Դարիժեցի, տպ. Ամսթէրտամ, Երես 254):

Մովսէս տեսաւ թէ այս վանական կարգը չէր ընդունուած ամէն կողմ. անոնք սե ոչ բնաւ գիտէին թէ պարտ է կարգաւորի զվեղար և զփիլոն ունել զիւրեանս կամ հանգիստս խոշորս և ստուխ զգնուել. այլ որպէս զաշխարհական և զմարմաւոր փափկիւ և ազնիւ զգեստաւ պնէին. շաբաւոր և կապայ, և պատուական փակեղ ի զլուխս, և բալափուտ զիւրե տոնալ, Այլև ոչ վարս

կանէին թէ պարտ է վանականաց պակօք և ժամաջանիւք երկօք կհնցաղաւարել: այլ ի բուրս տարին ուտիք և գինի և միս անխտրս: Մովսէս Վարդապետ զիւղական երէցներն ալ անկարգ գտաւ. անոնք անուսով միայն բոհանայ էին, ոմանք մեխիքութիւն կ'ընէին, ոմանք տանուտէրութիւն, ոմանք պոռնիկ էին և երկամայք, ոմանք աւու թեանց հեղինակներ էին, ոմանք մարմաւոր արհեստներու և նոզազորութեան գատաղած՝ աշխարհականներու պէս, քն ինչպիսի թողեալ զժամ և զպատարագ»: Աւգոթքի ժամուն եկեղեցի չէին երթար, քն ոչ լինէր լսելի ձայն ժամակոչի ի գեղորայս. քահանայութեան շնորհքը բուրովին վերցրած էր անոնց վրայէն, բայց տակալին իրենք զիրենք քահանայ կ'անուանէին, և քահանայութիւնը կ'ընէին տրուեստարու պէս՝ նիւթական վարձքի համար:

Բայց միայն զիւղական երէցներ և արեղաներ անկարգ և թափառական չէին, այլ կաթողիկոսներ ալ. վասնզի կաթողիկոսը մէկ չէր, այլ երեք, չորս, ամէնքն սյաղագք փառամուրթեան և ազանութեան, ապօրէն միջոցներով տիրայցած Աթոռին, իբր բռնաւորներ կը կրգեցնէ ժողովուրդը, արծաթով եպիսկոպոս և քահանայ կը ձեռնադրեն, ամէնքն ալ սգէտ, խոտու և անպիտան մարդիկ (անդ, Երես 283—285 շ.): Չերկարինք պատմութիւնը և նկարագրութիւնը այն բարայական և նոգուոր անկուսներուն և ապականութիւններուն, որոնք սրտամուրիկ են և քստմեցուցիլ, հաւատարապէս ծաւալած եկեղեցականներու և աշխարհականներու մէջ. որոնց առաջըր աննիւտ կոչուած էին Պօղոսի և Մովսէսի պէս առաքիլնի և իրենց գործին ու կոչուելու տէր վարդապետներ:

Եւ Մովսէս Վարդապետ կը յաջողի — յարթելով սոսկալի դժուարութիւններու համակրանք կը շարի Յոյնիկ պաշտօնական և բարձր շրջանակներու մէջ: Միւլթիոսի կից կ'ազգէ շահագործել Մովսէս Վրդի դիրքն ու ծաւալուն հեղինակութիւնը, և էջմիսածին կը հրաւիրէ, որպէսզի մեծ ուսուցիչն էր կատարել տայ անոր: Մովսէս Վրդայ յաջողի զիւրաշինած էր Անանիս Առաքեալին Անապատը, Երեսնի հիւսիսա

կողմը, այդինչերու մէջ, և հոն հաստատուած: Մեղքիսեթի պատուիրակ եպիսկոպոսներ կուգան և մեծարանքով կը հրաւիրեն վարդապետը, որպէսզի էջմիածին երթայ և օրհնէ մեռողը: Սես ոչ ունիմ զտախտան եպիսկոպոսութեան, կ'ըսէ Մովսէս, ոչ է այդ իմ գործ, այլ այնոցիկ՝ որք եպիսկոպոսք են: Պատուիրակներ յուսաւատա կը վերադառնան: Մեղքիսեթ նորէն կը հրաւիրէ ըսելով որ ես եպիսկոպոս կ'օրհնեմ զինքը, թող գայ: Մովսէս ամուր կեպով կը հրաժարի իբր անարժան, մինչ ամենէն արժանաւոր մարդն էր ինքը: Մեղքիսեթ անձամբ կու գայ Մովսէս վարդապետին առջը, և հոն: Լեւապատին մէջ, և կենդանաներու և ժողովրդեան թախանձանքով, եպիսկոպոս կ'օրհնէ զինքը Աւագ Երեքարթի օրը և հետը միասին էջմիածին կը բերէ, և մեռածօրհնէքը կը կատարուի Աւագ Հինգարթի օրը, ըստ հին սովորութեան: Մովսէս Եպս. Զուգայիցիներու խնդրանքով Ասպական կ'անցնի քարոզութեան և կովուտութեան, անկից ալ եկեղեցւոյ պէտքերուն և բարեկարգութեան համար մինչև Պաղատա ճամբորդութիւններ կ'ընէ, ամէն կողմ տանելով Աւետարանի կեանքը՝ իր անձին և խօսքին վրայ: Թարմ, հրապուրիչ և շինիչ, արքունի հրամանաւ կը ստանձնէ էջմիածին լուսարարութիւնը, և էջմիածինը, որ մրգապահներու խուզ դարձեր էր, քիչ ժամանակի մէջ կը շինէ, կը պայծառացնէ, պարտքերը կը վճարէ Ծռայ Նագարի օժանդակութեամբ, և ա'լ իր աշակերտները կը դրկէ իր կողմէն ամէն կողմ քարոզելու և խանդավառելու համար ժողովուրդը իր կրօնական և բարոյական կեանքին մէջ, և իր գործն ու անունը կը հուշակուի բոլոր Հայոց մէջ: Այնպէս որ ամենուն աչքը այս արժանաւոր եկեղեցականին վրայ սեւեռեցաւ: Ուզեցին զինքը տեսնել իր շէնցուցած Աթուլին վրայ: Արգէն Մեղքիսեթ կ'իջ. զյումած էր անձամբ Մովսէս Վրդ.ին, որ կաթողիկոսութիւնը առնէ իրմէն և պատասխանատու ըլլայ էջմիածին պարտքին, և այլն. բայց Մովսէս մերժած էր բացարձակապէս (Դաւրիժեցի, Երես 223-224): Մովսէս կը հաւանի այս սեզամ եղած թախանձանքներուն և կ'ընդունի կաթողիկոսական օժուճն ու ձեռնա-

գրութիւնը (1629 Յունիս. 13 - 1632 Մայիս 14): - Մովսէսի վարդապետութիւնը պատարաստեց իր առջև կաթողիկոսութիւնը. իբր վարդապետ՝ Մովսէս գործեց և զորածեց իր իշխանութիւնը, և իր բոլոր մեծագործութիւնները կը պարտի իր վարդապետութեան, որովհետև հազիւ չորս տարի կաթողիկոսութիւն կրցաւ ընել, թէև այդ չորս տարիները նուազ արդիւնաւոր չեղան:

Դաւրիժեցին վարդապետական իշխանութեան զործագրութեան ամենէն հետաքրքրական մէկ գրուագը կը նկարագրէ Գրիգոր Կեսարացիին՝ այս աւարկու, յոյժ խորխոր և զօտարանաւան (Երես 281), նոյն ատեն այս սվարունքն պարկեշտ, պարակաց և իմաստութեամբ փարթամ, բանիրուն և յոյժ հանճարիչ (Երես 358) վարդապետին վրայ:

Մեղքիսեթ կ'իջ. իր զեղծութիւնը և փաստիրութեան տխուր հետեանքէն կալածուած՝ երբ խոյս աուաւ էջմիածնէն և Պոլիս եկաւ, վարդապետեան ընդունելութիւն չգտնելով՝ անցաւ Լեւաստան, և Բովի մէջ, հակառակ ժողովուրդի բուռն բողոքներուն և ընդդիմութեան, եպիսկոպոս օրհնեց Նիկոլ Թորոսովիչը, որ հաշակաւոր է իր արատաւոր շահատակութիւններով, և ինքը մեռաւ Կամենցի մէջ, 1626ի Մարտկապարդի Եր. օրը: Նիկոլ Եպո. իր ձեռնագրութեան անաղին պտուղը տուաւ Կամենցի մէջ՝ Սաշիս անուն Սարկաւազ մը Արիզայ օրհնելով, զոր անուանեց Սնոփրիտ: Այս միջոցին Կեսարացին Կամենից կը գտնուէր Նիկոլ իր նորընծան, առանց քառասունքը լրացնելու, կ'ուզէր պատարագի հանել, և հանդիսաւորութեան համար Կեսարացին ալ կը հրաւիրէ պատարագին, բայց սա ոչ միայն հրաւէրը չ'ընդունիր, այլ նաև կ'ըսէ թէ Հայ Եկեղեցւոյ աւանդութեան և հայրապետական կանոններու հակառակ է քառասունքը չ'լրացած հրատանտը նորընծայի մը, որ պատարագ մատուցանէ: Նիկոլ այդ շարք կը զգուշանայ, բայց միւս շարքուն կ'ուզէ անպատեհաւորընծան հանել քառասունքէն. սասր համար կը հրաւիրուի Կեսարացին, որ դարձմաւ կը հրաւիրուի Կ'ըսէ թէ Եթօսքն մէկ կու եալ կը մերժէ և կ'ըսէ թէ Եթօսքն մէկ կու լինիս: Նիկոլ կարեւորութիւն չի տար Կեսարացիի արգելքին, և ոչ միայն նորընծան քառասունքին 22 օրերը միայն պահած ըլ-

լալով կը մատուցանէ իր պատարագը. այլ նաև Նիկոյ միևնոյն կիրակի օրը կը փակէ միւս եկեղեցին ուր կը գտնուէր Կեսարացին և բանալիններն ալ իր քովը կը պահէ. ետքը նորընծային պատարագ մատուցած եկեղեցին ալ կը փակէ: Այս բոլորը Աւագ Տօներուն կը պատահէր, ուր ժամ, պատուրագ կը դադրի: Կեսարացին այս անկարգութիւններու նեղինակ Նիկոյը նկովկեց, որ իր վրէժը լուծելու համար տեղական կառավարութեան մըջոցով ստիպեց գաւն հելի Լինաստանէն, Կեսարացին ելաւ և ճամբան կրկնեց իր նովը գրաւորապէս եւ իր կեց իրով: Նիկոյ նոց չընել ձեացուց, բայց ժողովուրդը խռովեցաւ և շատցան Նիկոյին հակառակորդները: Կեսարացին այս բոլոր անցած զարձածը տեղեկորդեց էջմիածին, Ռոմէս Կաթողիկոսին. սա ալ նովը Նիկոյը, որ բոլորովին անճարացած իր արբանեակներէն խորհրդով Կեսարացինն ետէն ճամբայ ելաւ, որպէնոք Ներուստ խնդրէ և արձակուի իր վրայ զրուած նշովքէն: Նիկոյ մինչև Պրուսա եկաւ. տեղւոյն Առաջնորդը, Պարբերոցի Արիստակէտ Վարդապետ, որ հաշտ չէր Կեսարացինն հետ, խորհուրդ տուաւ Նիկոյին չեթմալ Կեսարացինն. օ՛հու, ըսաւ Նիկոյին եպիսկոպոս ես եմ նա վարդապետ, չուցի զիս խառնութիւն ի վերայ քո, երբեմն ստէր, ի զուր և ի նախանձուէ բանապիտէ գրեց. երբեմն ստէր, եւ ես վարդապետ եմ իբրեւ զնա, ես որձակեմ զնոց ի կապանոց: Ու այլ բազմաւ կերպիւ խօսեցաւ և ոչ եթող զնալ ի Կեսարիա առ Քրիզոստոմոս Վարդապետ: Բայց Նիկոյ սուտ հիւանդ ձեանալով՝ նա մակ գրեց Կեսարացինն, Ներուստ խնդրեց. մինչև Պրուսա եկաւ, հիւստ հիւանդ ինկած եմ, սխնդրեմ զի բարձցես յինչև գրանալուան և արձակեցես ի կապանոց, և առաքեսցես ինձ և ժողովրդեանն զթուղթ օրհնութեան, զի թերևս աղօթիւք և օրհնութեամբ քով աստի դարձայ և ոչ ջուր թեամբ հասից ի տեղին իմո: Կեսարացին առանց կասկածանքի ներքեց Նիկոյին. և խնդրուած օրհնութեան գիրերը զրկեց: Նիկոյ ուրախ գուարթ իրով վերադարձաւ. բայց իր ետէն չուշացան Կեսարացինն նոր թուղթերը, որ տեղեկանալով թէ խաբէութեան մը զուգ զացած է, իր առաջին նշովքը

ներն ու բունապրանքները կրկնեց: Նիկոյ շատ դժուար գիրքի մը մէջ Մուսց. 1630րէ էր, Ռոմէս Կաթ. իր աշակերտներէն Կեսարացի Պաշտատուր Վարդապետը զրկեց իր նուիրակ այլեւայլ կողմեր, ինչպէս նաև Լինաստան: Պաշտատուր Վրդ. հեղ, հանգարտ քաղցրասորոյ, միանգամայն իմաստուն և բանիբուն անձ մըն էր. իր տեսութիւնը միայն բաւական էր միտքերը շանչու համար: Պաշտատուր Վրդ. Կեսարիոյ մէջ հոնդրպիտաւ Քրիզոստոմոս Վարդապետին, որ պէտք եղած տեղեկութիւնները տուաւ իրեն թէ՛ Լինաստան և թէ՛ Նիկոյի մասին, և ըսաւ որ չըլլայ թէ Նիկոյը ընդունի իրր եպիսկոպոս: Նուիրակը իրով կը հասնի նուիրակելով, և իր առաջին գործը կ'ըլլայ զբազմօրինակ և կանխախտ մտքառանձնութիւններ լսել Նիկոյի մասին: Պաշտատուր Վրդ. ուզեց ամէնքն ալ սիրաշահիլ. շատ աշխատեցաւ մանաւանդ որ խօսք հասկնէ Նիկոյին՝ կորելիլ եղած բոլոր միջոցներով, բայց անօգուտ: Այնպէս որ Կիրակի օր մը, երբ Պաշտատուր վարդապետ և Նիկոյ եպիսկոպոս միևնոյն եկեղեցւոյ մէջ կը գտնուէին, Նիկոյ հրամայեց իր արեղային որ Աւետարան կարգայ: Պաշտատուր Վրդ. արգելեց, և հրամայեց որ ուրիշ մը թող կարգայ: Նիկոյ ընդդիմացաւ և իր արեղային կարգայ տուաւ Աւետարանը: Պաշտատուր Վրդ. այս անարգանքին ու քամանանքին մէջ սպարձաւ առ ժողովուրդն և ասացայն մարդն անիմեալ լինի, որ սորա յետն ծուր դէն: Վարդապետը այս անէծքը գնելէն ետքը ելաւ եկեղեցիէն, և բոլոր ժողովուրդը ձմրահաղայն գրուտուեալ էին յեկեղեցւոյն: Պաշտատուր վարդապետ նայիոկ ատեսն կազմեց դաւաղու համար եպիսկոպոսը, որու նենգութիւններուն հետեանքով սակայն ի դերև ելաւ կազմուած աստիանի ձեռնարկը<sup>(\*)</sup>:

Արտապուտ Ռոմ Եպարքեթրէն, 1906  
(Շարունակիր: 15)

(\*) Այս բոլոր իրագործութիւններուն մանրամասնութիւնը տե՛ս Դաւիթեցիին քով, Գլ. ԻԷ, և Քոնի հոգևոր Միւսթիւն Լինաստանի Հայոց և ինչորձական գործը, որու սկիզբը զրուած է Յոյն Գլուխը: